ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայ քարտեզագրական հրատարակությունների մատենագիտություն

ԵՐԵՎԱՆ – 2018

Կազմեց՝ Աիդա Ադամյան

Խմբագիր՝ Հասմիկ Առաքելյան

Հայ քարտեզագրական հրատարակությունների մատենագիտություն /Կազմող՝ Աիդա Ադամյան; Խմբագիր՝ Հասմիկ Առաքելյան /ՀՀ Մշակույթի նախարարություն, Հայաստանի Ազգային գրադարան.- Երևան, 2018.- 163 էջ:

Ներկա մատենագիտությունն ընդգրկում է Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուներում պահպանվող հայերեն և այլալեզու քարտեզներն ու քարտեզագրքերը: Մատենագիտությունը կազմվել է հաշվի առնելով գիտության տարբեր ոլորտներում աշխատող ընթերցողների, ԲՈՒՀ-երի դասախոսների և ուսանողների պահանջներն ու հետաքրքրությունները: Մատենագիտությունը նախատեսվում է ընթերցողական լայն լսարանի՝ աշխարհագրական, պատմական, քաղաքական, տնտեսական, ազգագրական ուսումնասիրություններով զբաղվող գիտնականների և մասնագետների համար:

Հայաստանի ազգային գրադարանի քարտեզագրական ֆոնդը

Պատմության հոլովույթում դարեր շարունակ Երկրագնդի վրա քիչ տարածքներ կան, որոնք գրավել են քարտեզագիրների ուշադրությունը՝ հանդիսանալով քարտեզագրման օբյեկտ: Այդպիսի տարածք է Հայաստանը. սկսած հնագույն քարտեզագրական պատկերներից (որոնք այսօրվա չափանիշներով անգամ չեն կարող քարտեզներ համարվել) մեր երկիրը պատկերվել է հազարավոր վիմագիր, ձեռագիր և տպագիր քարտեզներում: Սկզբնական շրջանում՝ Հայաստանից դուրս, այնուհետև Հայաստանում, հայ և այլազգի մասնագետներ կազմել, իսկ 16-րդ դարից սկսած տպագրել են հարյուրավոր քարտեզներ, որոնք վկայում են այս տարածքներում հայ ժողովրդի առնվազն 2600 տարվա մշտական ներկայության մասին, ինչպես նաև տնտեսական, քաղաքական և մշակութային աշխույժ կյանքի մասին: Աշխարհի հարյուրավոր գրադարաններում, քարտեզադարաններում, պահոցներում, մասնավոր հավաքածուներում պահվող քարտեզներում տարբեր լեզուներով հանդիպող «Հայաստան» անունը ամենաշատ տարածված աշխարհագրական անվանումներից մեկն է: Անգամ այն ժամանակներում, երբ Հայաստանը որպես քաղաքական միավոր հանդես չի եկել, այնուհանդերձ, այդ անվանումը առկա է բոլոր ժամանակներում ստեղծված և տարածաշրջանը պատկերող քարտեզներում: Հայ մասնագետներն էլ, իրենց հերթին, թե՛ Հայաստանում և թե՛ նրա սահմաններից դուրս, կազմել ու հրատարակել են Երկրագնդի տարբեր մասերի քարտեզներ: Այդ առումով, կարելի է ասել, որ քարտեզագրական գործունեությունը չի ճանաչում ո՛չ սահման և ո՛չ էլ ազգություն:

Քարտեզները, անկախ իրենց ճշտության աստիճանից, բովանդակության լրիվությունից, արժանահավատ սկզբնաղբյուրներ են համարվում աշխարհագրական, պատմական, քաղաքական, տնտեսական, ազգագրական ուսումնասիրություններով զբաղվող գիտնականների և մասնագետների շրջանում: Հայաստանին առնչվող բազմաթիվ խնդիրներ իրենց լուսաբանումն են ստացել շնորհիվ այդ աղբյուրների: Դրանք մեծ արժեք են ներկայացնում այն առումով, որ օբյեկտիվորեն ներկայացրել են տվյալ

ժամանակաշրջանի իրողությունը: Դժվար է գտնել Հայաստանին նվիրված որևէ լուրջ պատմական կամ աշխարհագարկան ուսումնասիրություն, որտեղ օգտագործված չլինեն քարտեզներ:

Հայաստանի ազգային գրադարանի քարտեզագրական ֆոնդը իրենից ներկայացնում է աշխարհագրական քարտեզների հարուստ հավաքածու, որը հավաքվել է գրադարանի ստեղծման առաջին իսկ օրվանից: Ֆոնդը ստեղծվել է 1928 թ.՝ կերպարվեստի բաժնին կից քարտեզագրական կաբինետում առկա քարտեզների բազայի հիման վրա: Այս ֆոնդում առկա քարտեզներում ամփոփված են արժեքավոր տեղեկություններ, որոնք օգտագործվում են գիտական տարբեր ուսումնասիրություններում: Ֆոնդի բացահայտումը ընթերցողների լայն շրջանակների համար՝ ֆոնդի կարևորագույն խնդիրներից է, որը կարելի է լուծել միայն համակողմանի կազմված գրացուցակնների առկայության դեպքում: Քարտեզագրական ստեղծագործությունների գրադարանային գրացուցակը էականորեն տարբերվում է գրքային գրականության գրացուցակից նրանով, որ գրացուցակային քարտի վրա անհրաժեշտ է զետեղել բազմաթիվ տվյալներ՝ վերնագիր, մասշտաբ, հրատարակման տարեթիվ, հրատարակման վայր, հեղինակ և այլն: Այս տարրերից որևէ մեկի բացակայության հետևանքով քարտեզը կարող է հասու չլինել ընթերցողին:

Քարտեզների ստեղծումը երկարատև պատմական զարգացման արդյունք է: Հանդիսանալով գիտության ձեռքբերումներից մեկը, քարտեզներն իրենց ծնունդով ամենից առաջ պարտական են մաթեմատիկայի, երկրաչափության, տարածաչափության, աշխարհագրության, տպագրական գործի զարգացմանը:

Մինչև XVIII դարի սկիզբը քարտեզագրման աշխատանքների իրականացումը կատարվում էր պարզունակ եղանակով. տվյալ ժամանակի գիտության և տեխնիկայի մակարդակին համապատասխան, Արևի, Լուսնի և երկրային այլ մարմինների նկատմամբ գեոդեզիական գործիքներով չափումներ կատարելու արդյունքում որոշվում էր որևէ կետի կոորդինատները (աշխարհագրական լայնություն և երկայնություն), որից այնուհետև չափումներ էին իրականացվում տարբեր աշխարհագրական օբյեկտներ (բնակավայրեր, գետեր, ճանապարհներ և այլն): Ընդ որում, հորիզոնի կողմերը որոշում էին կողմնացույցով

կամ աչքաչափով, իսկ հեռավորությունները՝ ըստ այդ օբյեկտները հասնելու համար ծախսված ժամանակի:

18-րդ դարից սկսած քարտեզագրական աշխատանքներում եռանկյունավորման բարձր ճշտություն ունեցող գեոդեզիական գործիքների ներդրման շնորհիվ քարտեզներն արդեն ձեռք են բերում ժամանակակից քարտեզների բնույթ՝ թե՛ ճշտության, թե՛ բովանդակության և թե՛ ձևավորման առումով: Ներկայումս արդեն լայնորեն օգտագործվող արբանյակային դիրքորոշման կայանները, տիեզերական նկարները, տվյալների մշակման թվային տեխնոլոգիաները թույլ են տալիս ստանալ որակապես այլ քարտեզներ, որոնք իրականում արդեն նմանվում են տեղանքի մոդելների:

Աշխարհի տարբեր երկրներում քարտեզների ցուցակները (ռեեստրները, կատալոգները) կազմելու համար կիրառվում են տարբեր մոտեցումներ (դասակարգում ըստ լեզվի, ըստ քարտեզագրական ստեղծագործության տեսակի, ըստ թեմատիկ բնույթի, ըստ մասշտաբի, ըստ դարաշրջանների և այլն) կամ այդ մոտեցումների համադրությունը, օրինակ՝ քարտեզագրական ստեղծագործության տեսակ (քարտեզ, ատլաս, գլոբուս) լեզու և դարաշրջան, լեզու և հրատարակության վայր և այլն: Հայաստանի ազգային գրադարանում պահվող Հայկական քարտեզագրական ժառանգության մատենագիտության հեղինակը ընտրել է հիմնականում 3 գործոն՝ քարտեզագրական ստեղծագործության տեսակ՝ որպես առաջնային գործոն, լեզու՝ որպես հիմնական գործոն և աշխարհագրական տարածք՝ որպես երկրորդական գործոն:

Անկախ այն հանգամանքից, որտեղ, ինչ ազգային պատկանելություն ունեցող անձ (քարտեզագրական ստեղծագործությունը հաճախ ազգային տարբեր պատկանելիություն ունեցող մի քանի անհատի, կազմակերպության կոլեկտիվ աշխատանքի արդյունք է) և ինչ լեզվով է ստեղծել Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող քարտեզագրական ստեղծագործությունը, դրանցից յուրաքանչյուրը հանդիսանում է հայկական գրավոր մշակութային ժառանգության անբաժան մասը: Սակայն հաշվի առնելով ժամանակակից աշխարհում ամեն ինչ քաղաքականացնելու միտումը, քարտեզագրական ֆոնդը գիտականից բացի, ձեռք է բերում նաև քաղաքական նշանակություն: Հաշվի առնելով

վերոհիշյալ հանգամանքը, հարկ է նշել, որ իրենց նշանակությամբ և կարևորությամբ առանձնանում են քարտեզագրական ստեղծագործությունների հետևյալ խմբերը.

1. Հայկական գաղթօջախներում տպված քարտեզները և ատլասները
2. Ռուսական պաշտպանական գերատեսչությունների կողմից 19-րդ դարի 80-ական թթ. մինչև 20-րդ դարի 20-ական թթ. տպված Հայաստանի տարածքի տարբեր մասշտաբների տեղագրական ճշգրիտ և թեմատիկ քարտեզները
3. Հայաստանի տարածքն ընդգրկող և «Հայաստան» աշխարհագրական անվանումն արտացոլող Եվրոպական երկրներում 17-19-րդ դդ. տպված տարածարջանային քարտեզները
4. Հայ ժողովրդի պատմության, մշակույթի, սոցիալ-տնտեսական կյանքում առանձնահատուկ դեր խաղացած քարտեզագրական ստեղծագործությունները
5. Գեղարվեստական քարտեզագրության հայկական դպրոցի քարտեզները

Հայկական գաղթօջախներում տպված քարտեզները և ատլասները

Հայկական տպագիր քարտեզագրական մշակույթը ծնվել է Եվրոպայում: Օգտագործելով եվրոպական 17-19-րդ դդ. քարտեզների կազմման և տպագրության ձեռքբերումները, Ամստերդամի, Վենետիկի, Վիեննայի և Կոնստանդնուպոլսի տպարաններում տպագրվել են տասնյակ քարտեզներ և ատլասներ, ընդ որում դրանք պատկերել են Աշխարհը, տարբեր մայրցամաքներ, պետություններ, տարածքներ, Հայաստանը: Ամստերդամը հանդիսանում է հայկական քարտեզագրության «ծննդավայրը». այստեղ 1695 թ. Թովմաս Վանանդեցու տպարանում տպագրվել է առաջին հայալեզու քարտեզը՝ «Համատարած աշխարահացույցը» (կիսագնդերի քարտեզը): Գունավոր և պատկերազարդ այդ քարտեզի չափերն են 110 X 150 սմ:

Իր արդյունավետ քարտեզահրատարակչական գործունեությամբ առանձնանում են Վենետիկի Մխիթարյանները. 18 -19-րդ դդ. ստեղծված մի քանի տասնյակ քարտեզներ ու ատլասներ, աշխարհագրական և պատմական ուսումնասիրություններ՝ կից քարտեզներով: Աշխարհի տարբեր երկրներ, Հայաստան, Հայաստանի տարբեր մասեր՝ ահա քարտեզագրական ստեղծագործությունների այն ցուցակը, որոնք հրատարակել են Մխիթարյանները: Սկսելով Ամստերդամում հրատարակված «Համատարած

աշխարհացույցի» վերահրատարակումից, Մխիթարյանները այնուհետև ստեղծել են իրենց բնորոշ քարտեզագրական «ձեռագիրը». գեղարվեստական ոճը, առկա ինֆորմացիայի ամբողջական և քննական օգտագործումը (հիմնականում օգտագործվել են Եվրոպական քարտեզագիրների նյութերը) թույլ են տվել ստեղծել ինքնատիպ քարտեզագրական ստեղծագործություններ, որոնք մինչև օրս էլ չեն կորցրել իրենց արժեքը. անընդհատ բարձրացնելով տպագրության որակը, համագործակցելով Եվրոպայի քարտեզագիրների հետ, Մխիթարյաններին հաջողվել է ստեղծել հայկական քարտեզագրության «Մխիթարյանների դպրոցը»: Վիեննայում՝ Մխիթարյանների երկրորդ կենտրոնում նույնպես ստեղծվել են քարտեզագրական ստեղծագործություններ: Ճիշտ է, համեմատած Վենետիկի Մխիթարյանների հետ, այստեղ ստեղծված քարտեզագրական ստեղծագործությունների թվաքանակը փոքր է, սակայն Վիեննան էլ աչքի է ընկնել գլոբուսների «արտադրությամբ»: Վիեննայի Մխիթարյանները հանդիսանում են նաև հայերեն «Աշխարհի ատլասի» (1860 թ.), ինչպես նաև 1840-1850-ական թթ. տպագրված մի քանի երկրների (Շվեյցարիա, Լոմբարդիա, Պաղեստին, Ղրիմ և այլն) քարտեզների հեղինակները:

Հայկական գաղթօջախներում տպագրված քարտեզները համամարդկային քարտեզագրական ժառանգության մաս են հանդիսանում՝ քարտեզագրության մակարդակով չզիջելով եվրոպական քարտեզագրությանը:

Ռուսական պաշտպանական գերատեսչությունների կողմից 19-րդ դարի 80-ական թթ. մինչև 20-րդ դարի 20-ական թթ. տպված Հայաստանի տարածքի տարբեր մասշտաբների տեղագրական ճշգրիտ և թեմատիկ քարտեզները

19-րդ դարից սկսած ռազմական և տնտեսական խնդիրներ լուծելու համար պահանջվում էին տեղանքի ճշգրիտ և մանրամասն տեղագրական քարտեզներ: Դրանք հիմնականում կիրառում էին ռազմական ոլորտում, և այդ պատճառով էլ այդ քարտեզների ստացման համար անհրաժեշտ տեղագրագեոդեզիական աշխատանքները իրականացվում էին առաջնահերթ կարգով սահմանամերձ տարածքներում՝ ապագա ռազմական թատերաբեմերում՝ պաշտպանական գերատեսչությունների կողմից:

Հայաստանը, որը 19-րդ դարի ընթացքում ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների արդյունքում գրավվել էր Ռուսական կայսրության կողմից, հանդիսանում էր նման տարածք, և ռուսական իշխանությունները, այդ տարածքներում սկսեցին իրականացնել լայնածավալ աշխատանքներ՝ սահմանամերձ տարածքների վերաբերյալ համապատասխան մասշտաբի և որակի գեոդեզիական և քարտեզագրական նյութեր և տվյալներ ստանալու նպատակով: Կախված տարածքի կարևորությունից՝ հանութագրումն իրականացվում էր 1 դյույմում կես, 1 և 2 մասշտաբներով, քաղաքների և բերդերի հատակագծերի համար կիրառվում էին ավելի խոշոր մասշտաբներ (1 դյույմում՝ 200 և 250 սաժեն): Անդրկովկասի (այդ թվում Հայաստանի տարածքի) հանութագրման յուրահատկությունն այն էր, որ դա իրականացվում էր գործիքային եղանակով, իսկ ռելիեֆը՝ սկսած 1860-ական թթ. պատկերվում էր հորիզոնականներով:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը խոշորամասշտաբ տեղագրական հանութագրման արդյունքում ներկայիս Հայաստանի Հանրապետության տարածքը ամբողջությամբ ծածկված էր 1 վերստանոց (մասշտաբ՝ 1:21.000), 2 վերստանոց (մասշտաբ՝ 1:42.000), 5 վերստանոց (մասշտաբ՝ 1:210.000), 10 վերստանոց (մասշտաբ՝ 1:420.000) քարտեզ, 20 վերստանոց (մասշտաբ՝ 1:840.000), 40 վերստանոց (մասշտաբ՝ 1:1.680.000) տեղագրական քարտեզներով:

Տեղագրական քարտեզները հիմք հանդիսացան 19-րդ դարի 2-րդ կեսի և 20-րդ դարի սկզբի թեմատիկ քարտեզների (երկրաբանական, օգտակար հանածոների, ազգաբաշխական, ճանապարհային, վարչական բաժանման և այլն) կազմման համար: Շնորհիվ այդ քարտեզների, Հայաստանի տարածքում մինչև 2-րդ համաշխարհային պատերազմը, հայ և օտարազգի ուսումնասիրողները իրականացրեցին աշխարհագրական, երկրաբանական, հողագիտական, բուսաբանական, պատմական, հնագիտական և այլ բնույթի ուսումնասիրություններ: Այժմ էլ դրանք չեն կորցրել իրենց արժեքը և հանդիսանում են օբյեկտիվ աղբյուր այդ ժամանակաշրջանի Հայաստանի տեղագրական, աշխարհագրական, պատմական, ազգագրական նկարագրության համար:

Հայաստանի տարածքն ընդգրկող և «Հայաստան» աշխարհագրական անվանումն արտացոլող արևմտյան երկրներում հնագույն ժամանակներից մինչև 19-րդ դարը կազմված քարտեզները

Հայաստանը առաջին անգամ պատկերվել է մ.թ.ա. 6-րդ դ. ստեղծված Բաբելոնյան քարտեզում, որը կավե սալիկի վրա փորագրված սխեմա է: Հայաստանը պատկերող քարտեզներ են ստեղծվել անտիկ ժամանակաշրջանի աշխարհագետների և քարտեզագիրների (Հեկատեոս, Հերոդոտոս, Պոմպոինոս Մելա, Պտղոմեոս և ուրիշներ) կողմից: Այդ ժամանակշարջանի քարտեզագրական գործերից է նաև Պևտինգերյան քարտեզը, որի վրա արտացոլվել է Հռոմեական կայսրության ճանապարհային ցանցը, բնակավայրերը, ամրոցները և այլն: Հայաստանին վերաբերվող հատվածում ցույց են տրված մայրաքաղաք Արտաշատը, նրանից դուրս եկող ճանապարհները և այլն: Հաջորդ փուլում՝ միջնադարում, տարածում են ստանում վանական հաստատությունների կողմից ստեղծված «T-O» քարտեզները: Դրանցում Երկիրը պատկերվում էր որպես սկավառակ (O տառը), որը T տառով բաժանվում է 3 մասի, որոնք համապատասխանում էին Եվրոպային, Ասիային և Աֆրիկային: Մեզ հասած այդ քարտեզներից շատերում պատկերված է նաև Հայաստանը:

Քարտեզագրության զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին 15-րդ դարից սկսած՝ կապված տարբեր երկրների միջև առևտրային, տնտեսական կապեր հաստատելու հետ: Քարտեզների տարածմանը նպաստեց նաև տպագրության հայտնագործությունը, որի շնորհիվ քարտեզները սկսեցին բազմացնել տպագրության միջոցով (մինչ այդ դրանք տարածվում էին ձեռքով պատճենահանելու միջոցով): Սկսած 16-րդ դարից մինչև 19-րդ դարը եվրոպական երկրներում, իսկ 19-րդ դարից սկսած նաև ԱՄՆ-ում տպագրվել են հարյուրավոր քարտեզներ, որոնց վրա արտացոլված է Հայաստան անվանումը: Այդպիսիք են Հերարդ Մերկատորի, Աբրահամ Օրթելիի, Սեբաստիան Մյունստերի, Պիեռ Դեսելիենի (16-րդ դ.), Ֆիլիպ դե Լա Ռուի, Յոդոկուս Հոնդիուսի, Նիկոլաս Սանսոնի, Յոհաննես Բլաուևի, Ֆրեդերիկ դե Վիտի, Ֆիլիպ Էքերբրեխտի, Ռոբերտ Մորդենի, Ալեն Մալլետի, Ֆիլիպ Քլուվերիուսի (17-րդ դար), Ժիլ-Ռոբեր դե Վոգոնդիի, Վան դեռ Աաի, Ջոն Դավիդ Կոհլերի, Հերման Մոլի, Գիյոմ դե Լիլի, Յոհան Բատիստ Հոմանի, Ջոն Սենեքսի, Ռոբերտ Վուգոնդիի, Ժաք Բելլինի, Էմանուել Բոուենի,

Ֆիլիպ Բուաշի, Ժան-Բատիստ Բուրգինյոն դ՛Անվիլի, Քրիստոֆեր Վայգելի, Ռոբերտ Դանի, Պիեռ Մուլար-Սանսոնի (18-րդ դ.), Հենրի Կիպերտի, Սեմյուել Օգաստես Միտչելի, Հենրի Կառլ Վիլհելմ Բերգհաուսի, Թոմաս Համլիելմ Բրեդֆորդի, Ժոզեֆ Հատչինս Քոլթոնի, Կոնրադ Մալթե-Բրյունի, Պիեռ Լապիի, Շառլ-ֆրանսուա Դելամարշի, Կառլ ֆոն Սպռուների, Էդուարդ Ուելլերի (19-րդ դ.) և այլոց տարբեր վերնագրեր, տարբեր չափեր և տարածքային և ժամանակային տարբեր ընդգրկում ունեցող քարտեզներն ու ատլասները: Հեղինակ քարտեզագիրներին 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած սկսեցին փոխարինել մասնագիտական պետական (ազգային) և մասնավոր քարտեզագրական կազմակերպությունները, որոնց պատմական քարտեզներում արտացոլված է տարբեր ժամանակների Հայաստանը:

Հայաստանի տարածքն ու անվանումը ընդգրկող արտասահմանյան երկրներում տպագրված և մինչև 19-րդ դարն ընդգրկող պատմական արժեք ունեցող քարտեզներն ունեն կարևոր գիտական և քաղաքական նշանակություն:

Հայ ժողովրդի պատմության, մշակույթի, սոցիալ-տնտեսական կյանքում առանձնահատուկ դեր խաղացած քարտեզագրական ստեղծագործություններ

Հազարմյակների ընթացքում տարբեր հայ և օտարազգի քարտեզագիրների կողմից ստեղծվել են Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող տասնյակ հազարավոր քարտեզներ, ատլասներ, գլոբուսներ: Դրանց մեջ առանձնացվում են փոքրաքանակ քարտեզագրական ստեղծագործություններ, որոնք կարևորագույն նշանակություն են ունեցել Հայաստանի և հայ ժողովրդի պատմության, մշակույթի, սոցիալական և տնտեսական կյանքում: Լինելով առաջինը կամ յուրահատուկը իր տեսակի մեջ, դրանք հսկայական ազդեցություն են թողել Հայաստանի պատմա-մշակութային և սոցիալ-տնտեսական կյանքում: Քարտեզագրական այդպիսի ստեղծագործություններ են հանդիսանում.

1. Հայերեն առաջին տպագիր քարտեզը՝ »Համատարած աշխարհացոյց» (Ամստերդամ, 1695 թ.)
2. Հայերեն առաջին տպագիր ատլասը՝ «Ըստ նոր աշխարհագրական զննությանց» (Վենետիկ, 1786 թ.)

3. Հայերեն առաջին մեծադիր ատլասը՝ «Ատլաս Աշխարհացոյց պատկերաց, ըստ արքունի աշխարհագրաց Գաղղիոյ, Անգղիոյ, Գերմանիոյ և Ռուսաց» (Վենետիկ, 1849 թ.)

4. Հայերեն առաջին գլոբուսը՝ «Նոր երկրագունդ» (Վիեննա, 1850 թ.)

5. Խորհրդային Հայաստանի առաջին քարտեզը՝ «Հայաստանի ՍԽՀ վարչական ստորաբաժանման սխեմա» (Երևան, 1922 թ.)

6. Խորհրդային Հայաստանի առաջին աշխարհագրական ատլասը (Երևան-Թբիլիսի, 1928 թ.)

7. «Խորհրդային Հայաստանի առաջին գլոբուսը» (Լենինգրադ, 1934 թ.)

8. «Խորհրդային Հայաստանի քարտեզը» (Մասշտաբ՝ 1: 200.000, Լենինգրադ, 1932 թ.)

9. «Հայկական ԽՍՀ ֆիզիկական քարտեզը» (Մասշտաբ՝ 1: 300.000, Թբիլիսի, 1938 թ.)

10. «Հայկական ՍՍՀ ատլաս» (1961 թ.)

11. Հայաստանի ազգային ատլասը (Երևան, հ.1, 2007 թ., հ. 2, 2008 թ.)

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս (Երևան, 2009 թ.)

Քարտեզագրական այս ստեղծագործությունները փաստում են հայկական քարտեզագրության պատմական ակնառու ժառանգության և ներկայիս բարձր մակարդակի մասին:

Գեղարվեստական քարտեզագրության հայկական դպրոցի քարտեզները

Հայերենով տպագրված առաջին քարտեզները աչքի են ընկել գեղարվեստական հետաքրքիր լուծումներով՝ զարդարվել են տարբեր նկարներով, դեկորատիվ տարրերով, ճարտարապետական հուշարձանների պատկերներով և այլն: Սակայն դասական առումով դրանք գեղարվեստական քարտեզագրության նմուշների դասին չեն պատկանում:

1980-ական թթ. սկսած, հաշվի առնելով քարտեզագրության ոլորտում մշակված նոր մոտեցումները, Հայկական պետական ինժեներա-գեոդեզիական հետազոտությունների և նկարահանումների պետական ինստիտուտի թեմատիկ քարտեզագրության բաժնի մասնագետների կողմից կազմվեցին նոր քարտեզներ՝ հիմնված տեղանքի հեռանկարային

պատկերման հետ: Հեռանկարային պատկերումով քարտեզների կազմումը բարդ ստեղծագործական պրոցես է, որը պահանջում է տեղագրության, գծագրական երկրաչափության, նկարչության ոլորտներում մասնագիտական հմտություններ: Ինստիտուտում ստեղծված առաջին իսկ գործերը «Արագածի հարավային լանջերով», «Գառնի-Գեղարդ», «Հայկական լեռնաշխարհի շրջանաձև համայնապատկերը» և այլն, ցույց տվեցին գեղարվեստական քարտեզագրության կենսունակության մասին: Ներկայումս ոլորտում աչքի ընկած մասնագետներից երկուսը՝ Ռ. Աթոյանը և Ս. Աբրահամյանը ապրում և ստեղծագործում են արտասահմանում, և նրանց աշխատանքների հիմնական պատվիարտու են հանդիսանում օտարերկյա կազմակերպությունները: Ռ. Աթոյանը հեղինակ է ավելի քան 90 քարտեզների, Ս. Աբրահամյանը՝ շուրջ՝ 20-ի: Ռ. Աթոյանի ստեղծագործությունները հիմնականում վերաբերվում են եվրոպական երկրներին (Բեռլին, Վիլնյուս, Վենետիկ, Լվով և այլն), իսկ Ս. Աբրահամյանի ստեղծագործությունները՝ Ռուսաստանի քաղաքներին (Լիպեցկ, Սերգիև Պոսադ և այլն):

Երկու հեղինակները հանդես են գալիս համատեղ, երբ ստեղծագործությունը վերաբերվում է Հայաստանին, Արցախին, հայկական մշակույթին, հայկական սփյուռքին ու գաղթավայրերին: Նրանց համատեղ աշխատանքի արդյունքն է «Հայերը Ղրիմում» (1990 թ.), Էջմիածնի և Երևանի կենտրոնական մասի համայնապատկերային քարտեզները (2001 թ.), Արցախի պատկերազարդ համայնապատկերային քարտեզը (2016 թ.) և այլն: Հայ նկարիչ-քարտեզագիրների ջանքերի շնորհիվ հայկական գեղարվեստական քարտեզագրության դպրոցը ճանաչված է ողջ աշխարհում:

Սմբատ Դավթյան

Տեխնիկական գիտությունների թեկնածու

Աշխարհ

1. Համատարած աշխարհացոյց: [Մեծ կիսագնդեր] / Փորագրությունը՝ Ադրիանոս և Պետրոս Սքոնբեկ (Շխոնբեկ) եղբայրների. – Ամստերդամ : տպ. Թովմաս Վանանդեցու, 1695. – 1 թերթ, գուն., պատկերազարդ ; 110X150 սմ:

2. Համատարած աշխարհացոյց : [Կիսագնդեր, քարտեզ]. – [Վենետիկ : Ս. Ղազար, 1749]. – 1 թ. : քարտեզ ; 24X39 սմ.

3. Ափրիկէ, ըստ նոր աշխարհագրական զննութեանց / Փորագրող՝ Հ. Եղիա Էնտազեան. – Վենետիկ, Ս. Ղազար, 1786. – 1 թերթ ; 48X64 սմ:

4. Ասիա, ըստ նոր աշխարհագրական զննութեանց / Փորագրող՝ Հ. Եղիա Էնտազեան. – Վենետիկ : Ս. Ղազար, 1787. – 1 թերթ ; 46,5X64սմ:

5. Աշխարհացոյց Օսմանեան տէրութեան՝ որ ի յԵւրոպայ, այլ եւ փոքր թաթարաց, մասին Անատոլիոյ, Մաճառաստանայ, մասին լեհաց եւ մասին մօսկօֆաց / Փորագրող՝ Alessandri. – Վենետիկ : Ս. Ղազար, 1791. – 1 թերթ ; 24,5X41սմ:

6. Նեղուց Կոստանդնապօլսոյ. այն է Պօղազ իչի : Ի նախնումն Վոսփորոն Թրակիոյ / Փորագրող՝ Alessandri. – Վենետիկ : Ս. Ղազար, 1791. – 1 թերթ ; 23X41 սմ:

7. Աշխարհացոյց Մարմառա ծովուն և նեղուցի Սպիտակ ծովուն և նեղուցի Սեաւ ծովուն. – [Վենետիկ : Ս. Ղազար], 1805. – 1 թերթ ; 35X52 սմ. – Քարտեզը հայատառ թուրքերեն է:

8. Գծագրեալ ի Պոնտոս: Փորագրեալ ի Վէնէտիկ. – Վենետիկ : [Ս. Ղազար], 1820. – 1 թերթ ; 42X57 սմ:

9. Քարտեզ Խրիմի: [Խրիմ կամ Տաւրեան թերակղզի]. – Վենետիկ : Ս. Ղազար, [1830]. – 1 թերթ ; 40X56 սմ:

10. Կիսագունտ: Հարթագունդք: 1. Երկրի; 2. Երկնից; 3. Մեծագոյն մասին ցամաքի եւ ջրոյ; 4. Կոպեռնիկեան կարգ մոլորակաց; 5. Երկրագունդ; 6. Բարձրութիւնք լերանց; 7. Համեմատական պատկեր մեծագոյն գետոց / Ծրագր. Հ. Աղեքս. Վ. Պալճեան ի Մխիթարեան Ուխտէ. – Վիեննա : «Ի վանս պաշտպան Ս. Աստուածածնի», 1850. – 1 թերթ ; 50X70 սմ:

11. Երկրագունտ ըստ նոր աշխարհագրական զննութեանց: Գծագրեալ ի Հ.Ա.Պ ի Մխիթարեան Միաբանութեան, ի Վիէննա, ի վանս պաշտպան Ս. Աստուածածնի. – Վիեննա : «Ի վանս պաշտպան Ս. Աստուածածնի», [1851]. – 1 թերթ ; 49X41 սմ:

12. Նոր երկրագունդ / Աշխատասիրութեամբ՝ Հ. Աղեքս. Վ. Պալճեան ; Ծրագրեալ ըստ նոր զննութեանց ի Հ. Արսէնի Այտընեան, ի վանս պաշտպան Ս. Աստուածածնի. – Վիեննա : [«Հանդես Ամսօրեայ»], 1856. – 1 քարտեզ, (8) թերթ, գուն. ; 45X55 սմ:

13. Նորագոյն ընդարձակ քարտէս Պալքանեան պետութեանց / Ծրագրեց՝ Ա. Պիպէռճեան ; Գծագրեց՝ Ս. Ակայեան. – 1 : 864 000. – [Կ. Պոլիս] : Հայրենիք Կազմատուն-Մաղազաճեան Եղբարց, [1913], տպագրուած եօթը գոյներով. – 1 թերթ, գուն. ; 87X116 սմ. – Բովանդակութիւն՝ Եւրոպական Թուրքիա, Պուլկարիա, Յունաստան, Սերպիա, Ալպանիա, Գարատաղ:

14. Ընդարձակ քարտէս Օսմանեան պետութեան / Ծրագրեց՝ Ա. Պիպէռճեան ; Գծագրեց՝ Յ. Փափազեան. – Կ. Պոլիս : Հայրենիք, [1913]. – 1 թերթ, գուն. ; 87X121 սմ:

15. Քսենոփոնի արշաւանքը մինչև Սև ծով. Քարտէս Բ-րդ. բակագիծի մէջ զատուած անունները Քսենոփոնի կողմից / Գրեց՝ Էդուարդ ֆոն Հոֆֆմայսթեր. – 1 : 4 000 000. – Ա.տ. : Ա.հ., [1913]. – 1 թերթ ; 28X43 սմ:

16. Կիսագնդեր: Ֆիզիկա-քաղաքական քարտեզ / Կազմ.՝ Վ.Ա. Տուգուլով. – 1 : 65 000 000. – Թիֆլիս : Զակկնիգա Ակտ. ընկերության, [1920-ական թթ.]. – 1 թերթ, գուն. ; 34X72 սմ:

17. Չինաստանի քարտեզ: [Քաղաքական քարտեզ] / Վիմ. նկ. աշխ.՝ Եղիազար Դանչոյի. – 1 : 8 000 000. – Ե. : ՀՍԽՀ Պետհրատ, [1927]. – 1 թերթ ; 71X51 սմ:

18. Խաղաղականի յերկրները / Խմբ.՝ Հովհ. Ստեփանյան ; Գծ. յեվ վիմ. աշխ.՝ Եղիազար Դանչոյի. – 1 : 30 000 000. – [Ե]. : Պետհրատ, [1932]. – 1 թերթ, գուն. ; 53X75 սմ:

19. Հեռավոր Արևելքի յերկրները / Խմբ.՝ Հովհ. Ստեփանյան. – 1 : 10 000 000. – [Ե] : Պետհրատ, [1932]. – 1 թերթ, գուն. ; 72X52 սմ:

20. Կիսագնդերի ֆիզիկական քարտեզ: Տարրական դպրոցի համար / Կազմ.՝ Պ.Ա. Մալինովսկի ; Խմբ.՝ Հ. Ստեփանյան. – 1-ին հրատ. – 1 : 32 000 000. – Լ. : Ա.հ., 1934. – 1 թերթ, գուն. ; 92X108 սմ:

21. Իսպանիա / Կազմ.՝ Հովհ. Ստեփանյան. – 1 : 25 000 00. – [Ե] : ՀԿ(բ)Կ Քաղբայկոմի կուսկաբինետ, [1936]. – 1 թերթ, գուն. ; 48X60 սմ:

22. Կիսագնդերի քաղաքական քարտեզ: Արևմտյան կիսագունդ: Արևելյան կիսագունդ: Տարրական դպրոցի համար / Խմբ.՝ Վ.Պ. Բուդանով, Ա. Անտոնյան, Հ. Ստեփանյան. – 1- ին հրատ. – 1 : 24 000 000. – Լ. : Ա.հ., 1936. – 1 թերթ, գուն. ; 72X110 սմ:

23. Կիսագնդերի քաղաքական քարտեզ: Արևմտյան կիսագունդ: Արևելյան կիսագունդ: Ուսումնական / Գիտ. խմբ.՝ պրոֆ. Վ. Պ. Բուդանով. – 1 : 24 000 000. – 1-ին հրատ. – Լ. : ԳՈՒԳՍԿ ՆԿՎԴ СССР, 1938. – 1 թերթ, գուն. ; 72X109 սմ:

24. Եվրոպա: Ֆիզիկական քարտեզ / Сост. Ленингр. Картосост. ГУГСК НКВД СССР ; Отв. ред. В.В. Коновалов . – 1 : 3 500 000. – Изд. 1-ое. – Л. : ГУГСК НКВД СССР , 1938. – 1 թերթ, գուն. ; 196X236 սմ:

25. Եվրոպա: Ֆիզիկական քարտեզ / Сост. Ленингр. Картосост. ГУГСК НКВД СССР ; отв. ред. В.В. Коновалов. – 1 : 3 500 000. – Изд. 1-ое. – Л. : ГУГСК НКВД СССР, 1938. – 1 քարտեզ, (6) թերթ, գուն. ; 69X94 սմ:

26. Եվրոպայի ֆիզիկական քարտեզ: Ուսումնական / ԽՍՀՄ ՆԳԺԿ պետ. նկարահան. և քարտեզագրական վարչություն. – 1 : 3 500 000. – 1-ին հրատ. – Л. : ГУГСК НКВД СССР, 1938. – 1 թերթ, գուն. ; 144X208 սմ:

27. Եվրոպա: Քաղաքական քարտեզ / Сост. Ленингр. ГУГСК НКВД СССР ; отв. ред. В.В. Коновалов. – 1 : 3 500 000. – Изд. 1-ое. – Л. : ГУГСК НКВД СССР, 1938. – 1 թերթ, գուն. ; 196X236 սմ:

28. Եվրոպա: Քաղաքական քարտեզ / Сост. Ленингр. ГУГСК НКВД СССР ; отв. ред. В.В. Коновалов. – 1 : 3 500 000. – Изд. 1-ое. – Л. : ГУГСК НКВД СССР, 1938. – 1 քարտեզ, (6) թերթ, գուն. ; 69X94 սմ:

29. Հյուսիսային Ամերիկայի ֆիզիկական քարտեզ: Ուսումնական. – 2-րդ ուղղ. հրատ. – 1 : 8 000 000. – [Մ] : ՊՆՔԳՎ, 1938. – 1 թերթ, գուն. ; 144X108 սմ:

30. Արևմտյան կիսագունդ: Ֆիզիկական քարտեզ / Сост. Ленинград. Картосост. ГУГК СНК СССР. – 1 : 15 000 000. – Л. : ГУГК СНК СССР, 1939. – 1 քարտեզ, (4) թերթ, գուն. ; 78X69 սմ:

31. Արևելյան կիսագունդ: Ֆիզիկական քարտեզ / Сост. Ленинград. Картосост. ГУГК СНК СССР. – 1 : 15 000 000. – Л. : ГУГК СНК СССР, 1939. – 1 քարտեզ, (4) թերթ, գուն. ; 78X69 սմ:

32. [Աշխարհի քարտեզ գլոբուսի համար]. – Изд. 1-ое. – Л. : ГУГК СНК СССР, 1939. – 1 թերթ, գուն. ; 70X80 սմ:

33. Աշխարհի քաղաքական քարտեզ: Արևմտյան կիսագունդ: Արևելյան կիսագունդ: Տարրական դպրոցի համար / Сост. Лен. Картосост. ГУГК СНР СССР 1939 г. – 1 սմ-ում 200 կմ. – 1-ին հրատ. – Л. : ГУГК СНР СССР, 1940. – 1 թերթ, գուն. ; 117X190 սմ:

34. Աշխարհի քաղաքական քարտեզ: Արևմտյան կիսագունդ: Արևելյան կիսագունդ: Տարրական դպրոցի համար / Сост. Лен. Картосост. ГУГК СНР СССР 1939 г. – 1 սմ-ում 200 կմ. – 1-ին հրատ. – Л. : ГУГК СНР СССР, 1940. – 1 քարտեզ, (4) թերթ, գուն. ; 63X101սմ:

35. Աշխարհի քաղաքական քարտեզ: Արևմտյան կիսագունդ: Արևելյան կիսագունդ: Քարտեզ տարրական դպրոցի համար / Կազմ.՝ ԳՔԳ Լենինգրադի քարտեզագրական բաժանմունք. – 1 սմ-ում 220 կմ. – Մ. : ԳՔԳ, 1949. – 1 քարտեզ, (2) թերթ, գուն. ; 108X88 սմ:

36. Կորեա [Քաղաքական քարտեզ] / Խմբ.՝ Հ. Ստեփանյան ; Քարտեզագիրներ՝ Կ. Շահմուրադյան, Հ. Գործակալյան. – 1 : 2 500 000. – Ե. : ՀՍՍՌ կուլտլուս. գործկոմ, 1950. – 1 թերթ, գուն. ; 62X50 սմ:

37. Աշխարհի քարտեզը 1763 թվին / Խմբ՝. Ա.Ի. Ագաֆոնովա ; Հայպետհրատի խմբ.՝ Կ. Ավետիսյան. – Ե. : Հայպետհրատ, 1955. – 1 թերթ, գուն. ; 25X42 սմ:

38. ԱՄՆ-ի քարտեզը = United States of America [Ֆիզիկա-աշխարհագրական] ; base map by U. S. Geological Survey / Նկ.՝ Սթիվն Գոթլիբ. – 1 : 7 500 000. – Vienna: Embassy of the United States of America ; U. S. Information Service, 1973. – 1 թերթ, ծալված, գուն. նկ., երկկողմանի տպագրություն, տեքստը՝ հայ. ; 48X70 սմ:

39. Վենետիկ = Venezia: Համայնապատկեր / Նկարիչ, քարտեզագիր՝ Ռ. Աթոյան. – Վարշավա : Terra Nostra, [1998]. – 1 թերթ, գուն. ; 66X95 սմ. – ISBN 83-87442-37-2:

40. Առաջավոր Ասիա / Գլխ. խմբ.՝ Ա. Նազարյան. – 1 : 3 000 000. – Ե. : Գեոքարտ կենտրոն, 2004. – 1 թերթ, գուն. ; 100X70 սմ:

41. Աշխարհի քաղաքական քարտեզ / Գլխ. խմբ.՝ Ա. Նազարյան ; Խմբ՝. Ա. Դավթյան. – 1 : 35 000 000. – Ե. : Գեոքարտ կենտրոն, 2005. – 1 թերթ, գուն. ; 100X70 սմ:

42. Աշխարհի ֆիզիկական քարտեզ / Գլխ. խմբ.՝ Ա. Նազարյան. – 1 : 25 000 000. – [Ե.]: Գեոքարտ կենտրոն, 2006. – 1 քարտեզ, (2) թերթ, գուն. ; 130X70 սմ:

43. Աստղային երկնքի քարտեզ. – [Ե]. : Գեոքարտ կենտրոն, [2006]. – 1 թերթ, գուն. ; 90X57 սմ:

44. Հարավային Կովկաս / Գլխ. խմբ.՝ Ա. Նազարյան. – 1 : 1 000 000. – [Ե.] : Գեոքարտ կենտրոն, 2006. – 1 թերթ, գուն. ; 70X100 սմ:

45. Աշխարհի վարչաքաղաքական քարտեզ / Հրատ.՝ Կոլլաժ ; Հեղ.՝ Գ. Բեգլարյան ; Նախագիծը՝ Ա. Մուրադյանի ; Ձևավորումը՝ Ա. Ճերմակյանի. – 1 : 35 000 000, 1 սմ-ում 350 կմ. – Վերահրատ. 2004 թ. հրատ.-ից . – Ե. : Կոլլաժ, 2007. – 1 թերթ, գուն. ; 70X100 սմ:

46. Հարավային Կովկաս = Southern Caucasus. Վարչաքաղաքական քարտեզ / Հեղ.՝ Գ. Բեգլարյան. – 1 : 950 000. – Ե. : Կոլլաժ, 2008. – 1 թերթ, գուն. ; 100X70 սմ., ծալված 13X24 սմ:

47. Աշխարհացույց: Ֆիզիկաաշխարհագրական քարտեզ: Վինքել-Թրիփելի հավասարաչափ ձևավորած արտապատկեր / Հեղ.՝ Գ. Բեգլարյան. – 1 : 36 000 000. – Ե. : Կոլլաժ, 2008. – 1 թերթ, գուն. ; 100X70 սմ:

48. Եվրոպա: Վարչաքաղաքական համալիր քարտեզ / Հեղ.՝ Գ. Բեգլարյան. – 1 : 6 000 000. – Ե. : Կոլլաժ, 2008. – 1 թերթ, գուն. ; 70X100 սմ:

49. Առաջավոր Ասիա = Anterior Asia: Վարչաքաղաքական քարտեզ / Հեղ.՝ Գ. Բեգլարյան. – 1 : 4 200 000. – Ե. : Կոլլաժ, 2009. – 1 թերթ, գուն. ; 100X70 սմ., ծալված 13X24 սմ. – Բնագիրը ՝ զուգ. հայ. և անգլ.:

50. Աշխարհի մանկական քարտեզ: Տվյալ երկրին կամ տարածքին բնորոշ կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչների, կերպարների ու կառույցների պատկերներով: Նախադպրոցական և կրտսեր դպրոցական երեխաների համար / Գեղ. խմբ.՝ Ա. Բաղդասարյան ; Խմբ.՝ Լ. Դավթյան ; Նկ.՝ Ա. Մինասյան ; Համակարգչային ձևավորումը՝ Լ. Ումեդյանի. – Ե. : Զանգակ - 97, 2010. – 1 թերթ, գուն. ; 68,5X97 սմ:

51. Հարավային Կովկաս = Southern Caucasus. Վարչաքաղաքական քարտեզ / Հեղ.՝ Գ. Բեգլարյան. – 1 : 1 000 000. – Ե. : Կոլլաժ, 2010. – 1 թերթ, գուն., 100X70 սմ., ծալված 13X24 սմ. – Բնագիրը՝ զուգ. հայ. և անգլ. :

52. Աշխարհի վարչաքաղաքական քարտեզ / Հեղ.՝ Գ. Բեգլարյան. – 1 : 24 300 000. – Ե.: Կոլլաժ, 2011. – 1 թերթ, գուն. ; 100X70 սմ:

53. Աշխարհի քաղաքական քարտեզ / Հրատ՝. AnuBars ; Հեղ՝ Անուշավան Բարսեղյան. – Վինկել Թրայփելի պրոյեկցիա. – 1 : 33 400 000, 1 սմ-ում 334 կմ. – [Ե.] : Անուշավան Բարսեղյան, 2011. – 1 թերթ, գուն. ; 70X110 սմ:

54. Աշխարհի քաղաքական քարտեզ / Հրատ՝. AnuBars ; Հեղ.՝ Անուշավան Բարսեղյան. – Վինկել Թրայփելի պրոյեկցիա. – 1 : 18 000 000, 1 սմ-ում 180 կմ. – [Warszawa : Eclipse Print], 2011. – 1 թերթ, գուն. ; 127X183 սմ:

55. Աշխարհի ֆիզիկական քարտեզ / Հրատ՝. AnuBars ; Հեղ՝ Անուշավան Բարսեղյան. – Վինկել Թրայփելի պրոյեկցիա. – 1 : 33 400 000, 1 սմ-ում 334 կմ. – [Ե.] : Անուշավան Բարսեղյան, 2011. – 1 թերթ ; 70X100 սմ:

56. Հին Եգիպտոսը և Միջագետքը Ք.ա. IV-I հազարամյակներում. – Ե. : Զանգակ - 97, 2012. – 1 թերթ, գուն. ; 68X97 սմ. – ISBN 978-9939-68-041-5:

57. Լեհաստանի Հանրապետություն: (Լեհաստան): Ընդհանուր ակնարկային վարչաքաղաքական քարտեզ / Հեղ.՝ Գրիգոր Բեգլարյան. – Ե. : Կոլլաժ, 2013. – 1 թերթ, գուն. ; 100X70 սմ:

58. Ախարհի քաղաքական քարտեզ / Գլխ. խմբ՝. Ա. Նազարյան ; Խմբ՝. Ա. Դավթյան. – 1 : 35 000 000. – Ե. : Գեոքարտ կենտրոն, 2015. – 1 թերթ, գուն., լուսանկ. ; 70X100 սմ:

59. Աշխարհացույց: Ֆիզիկաաշխարհագրական քարտեզ: Վինքել-Թրիփելի հավասարաչափ ձևավորած արտապատկեր / Հեղ.՝ Գ. Բեգլարյան ; Նախագիծը՝ Ա. Մուրադյանի. – 1 : 36 000 000. – Ե. : Կոլլաժ, 2016. – 1 թերթ, գուն. ; 70X100 սմ:

60. Աշխարհի վարչաքաղաքական քարտեզ / Հեղ.՝ Գ. Բեգլարյան ; Նախագիծը՝ Ա. Մուրադյանի. – 1 : 24 300 000. – Ե. : Կոլլաժ, 2017. – 1 թերթ, գուն. ; 70X100 սմ:

61. Աշխարհի ֆիզիկական քարտեզ / Հրատ՝. AnuBars ; Հեղ՝ Անուշավան Բարսեղյան. – Վինկել Թրայփելի պրոյեկցիա: Կենտր. միջօրեակ. 0^0. – 1 : 33 400 000, 1 սմ-ում 334 կմ. – [Ե.] : Անուշավան Բարսեղյան, 2017. – 1 թերթ ; 70X100 սմ:

Ա. Թ.

62. Պուշկինի մարշրուտները Ռուսաստանում: [Սխեմատիկ քարտեզ]. – Ա.տ. : Ա.հ., ա.թ. – 1 թերթ ; 47X43 սմ. KO -IV 509/ 29

63. Ռուս-տաճկական պատերազմը. – Դիւյմը 20 վ . – Թիֆլիս : Ա. հ, ա.թ. – 1 թերթ, գուն; 70X60 սմ:

64. [Օսմանյան կայսրություն (ի բացառյալ հարավային մասի)]. – Ա.տ. : Ա.հ., ա.թ. - 1 թերթ, սև-սպիակ ; 38X66 սմ:

Հայաստան

65. Երկիր Աւետեաց: Փորագրեալ ի Վենետիկ. – Վենետիկ : Ս. Ղազար, 1746. – 1 թերթ; 53,5X42 սմ:

66. Աշխարհացոյց Հայաստանեայց ըստ հին եւ նոր աշխարհագրաց: Փորագրեալ ի Վենետիկ. – Վենետիկ : Ս. Ղազար, 1751. – 1 թերթ ; 41X52 սմ:

67. Աշխարհացոյց Հայաստանեայց. – Վենետիկ : Ս. Ղազար, 1778. – 1 թերթ ; 82X82,5 սմ:

68. Հայաստան աշխարհ: Ըստ նախնի աշխարհագրաց / Փորագրեալ ծախիւք Յովհաննու Ամիրայի. – 1 : 2 200 000. – Վենետիկ : Ս. Ղազար, 1849. – 1 թերթ, գուն. ; 66X90 սմ:

69. Հին Հայաստան եւ իր դրացի երկրները / Վիմագր.՝ Գ. Դիւստերդիկ. – 1 : 800 000. – Թիֆլիս : Ա.հ., [XIX դ. II կես]. – 1 թերթ ; 41X54 սմ:

70. Հայաստան: Քարտեզ նախկին Հայաստանի / Աշխատասիր.՝ Ավետիք Տէր- Յակովբեանց, 1882. – 1 թերթ, անկանոն գծվածքով ; 31X43 սմ:

71. Սիսուան: Կիլիկիա հին եւ նոր: Հայկական գաւառօք ԺԲ - ԺԴ դարուց. – 1 : 1 000 000. – Վենետիկ : Ս. Ղազար, 1885. – 1 թերթ, գուն. ; 49X69 սմ:

72. Հայաստան [Խրիմյան Հայրիկի դիմանկարով] . – 1 : 1 250 000. – Կահիրե : Վիմագր. Սֆինքս ; Մ. Պ և Ս. Մ ընկերութ., [XX դարի սկիզբ]. – 1 թերթ, գուն. ; 51X72 սմ:

73. Բորչալուի գավառ / Նկարեց՝ Վարդան Միրզոյեան. – 1 : 500 000.- Թիֆլիս : Ա.հ., 1902. – 1 թերթ; 62X69 սմ:

74. Սխեմատիկ քարտեզ: Հիմնարկութեանց Հայոց Բարեգործ. Ընկ. Հայկ. Կենդրոն Կոմիտէի կից Հայոց Բարեգործ. Ընկ. և Պետական մթերանոցների բացւած գաղթականական կարիքների համար. Կ. Հ. Բ. ընկ. կողմից յանձնարարութեամբ Կովկասեան ճակատի գաղթականութեան գլխավոր լիազորի. – [Թիֆլիս : Ա.հ., 1903]. – 1 թերթ; 75X95 սմ:

75. Հայաստան եւ հարեւան երկիրները = L'Arménie et les pays voisins / Գծագր. և փորագր՝. Հ.Պ. Մանիսաճեան. – 1 : 3 500 000. – Բազել : Եւրոպայի հայ ուսանողական միության հրատ., 1904. – 1 թերթ, ծալվ., գուն. ; 57X68 սմ:

76. Սասուն / Կազմ.՝ Ա. Քալանթար. – Тифлисъ : [Տպագրատուն՝ «Հերմէս» ; Лит. К.І. Месхіев], 1904. – 1 թերթ ; 30X28 սմ:

77. Երեւանեան նահանգի Շարուր-Դարալագեազի եւ Նախիջեւանի գաւառներ / Կազմ.՝ Երվանդ Լալայեան. – 1 : 200 000. – [Թիֆլիս : Հայոց ազգագրական ընկերություն, 1906]. – 1 թերթ ; 71X68 սմ:

78. Հին Հայաստան / Կազմ.՝ Լեո ; Նկ.՝ Ս. Երկանեան. – Թիֆլիս : Գ. Յ. Տէր Մարգարեան, [1906]. – 1 թերթ, գուն. ; 43X55 սմ:

79. Երեւանեան նահանգի Նոր-Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք / Կազմ.՝ Երվանդ Լալայեան ; Նկ.՝ Պ. Մարիմեան. – Թիֆլիս : Հայոց ազգագրական ընկ. հրատ., 1908. – 1 թերթ ; 58X79 սմ:

80. Հին Հայաստան եւ շրջակայ երկիրները / Պատրաստեց՝ Գէորգ-Մեսրոպ ; Գծ.՝ Արամ Փիլիկյան ; Վիմագր.՝ Ա. ՃէնտէրէՃեան. – Կ. Պոլիս : Ա.հ., [1910]. – 1 թերթ ; 26X36 սմ:

81. Պատմական Հայաստան եւ հարեւան երկիրները / Կազմ.՝ Գ. Վարդանեան ; Նկ.՝ Գ. Դիւստերդիկ. – 1 : 800 000. – Թիֆլիս : Հրատ. Գ. Վարդանեանի և Գ. Դիւստերդիկի, 1910. – 1 թերթ ; 108X191 սմ:

82. Պատմական Հայաստան և հարևան երկիրները / Կազմ.՝ Գ. Վարդանեան ; Նկ.՝ Գ. Դիւստերդիկ. – 1 : 800 000. – Թիֆլիս : Հրատ. Գ. Վարդանեանի և Գ. Դիւստերդիկի, 1910. – 1 քարտեզ, (4) թերթ ; 60X78 սմ:

83. Ընդարձակ քարտէս Օսմանեան պետութեան / Ծրագրեց՝ Ա. Պիպէռճեան ; Գծագրեց՝ Յ. Փափազեան. – Կ. Պոլիս : «Հայրենիք» կազմատուն, [1913]. – 1 թերթ, գուն. ; 87X 121 սմ:

84. Հայաստան և հարեւան երկիրներ ըստ Լինչի եւ Օսւալդի / Խմբ. և հրատ.՝ Արտաշես Աբեղեան. – 1 : 1 000 000. – Թիֆլիս : Հեղ. հրատ., 1915. – 1 թերթ, գուն. ; 74X100սմ:

85. Ռուս-թրքական ռազմաբեմ: № 2. Ալաշկէրտի, Վանայ և Ատրպատականի շրջան / Հրատ. Գ. Վարդանյանի. – քսան վերստը 1 անգլ. դիւյմի մէջ. – Թիֆլիս : Վիմագրատուն Հ. Շահբազյանցի, [1916]. – 1 թերթ, գուն. ; 23X30 սմ:

86. Ռուս-թրքական ռազմաբեմ: № 1. Տրապիզոնի և Էրզրումի շրջան / Հրատ.՝ Գ. Վարդանյանի. – քսան վերստը 1 անգլ. դիւյմի մէջ. – Թիֆլիս : Վիմագրատուն Հ. Շահբազյանցի, [1916]. – 1 թերթ, գուն. ; 23X30 սմ:

87. Հայաստան եւ դրացի երկիրները. – 1 : 3 500 000. – [Բոստոն] : Հրատ. Յ. Ն. Աշոտեանի, [1917]. – 1 թերթ, գուն. ; 55X45 սմ:

88. Ռուս-թիւրքական ռազմաբեմ: Հայաստան եւ հարեւան երկիրներ / Լիտոգր.՝ Ս.Ի. Բիխով . – [Թիֆլիս : «Մշակ» լրագրի հրատ., 1917] . – 1 թերթ, գուն. ; 53X69սմ:

89. Բօր-Սայիտի հայ գաղթականներու վրանաքաղաքը: Սուեզի ջրանցք: Ցանկ անուանց ընտանեաց նոր գաղթականներու: Ցանկ անուանց ընտանեաց սուէտիացւոց: Ջրանցք Բօր-Սայիտի աղի ընկերութեան: [Հատակագիծ] / Գծ.՝ Մարտիրոս Պալաեան. – 1 : 1 000. - Գահիրէ : Ա.հ., 1919. – 1 թերթ ; 140X90 սմ:

90. Հայաստանի Հանրապետություն: Առաջին Հանրապետության ղեկավարները: [Քարտեզ-պլակատ] = Paris : Imp. Franco - Slav., 1920. – 1 թերթ, գուն., 8 դիմանկ., գերբ ; 43X53 սմ:

91. Փոքր Ասիա: Ասիական Թուրքիա, Հայաստան եւ այլ երկրամասեր: Քարտես «Հայ Գողգոթա»-ի / Գծ.՝ Մ. Եղիվարդեան. – Ա.տ. : Ա.հ., 1922. – 1 թերթ ; 34X25 սմ:

92. Հայաստանի բնական մաս: Գունավոր ընդարձակ քարտէս / Հետևողականութեամբ՝ Հ. Լինչի ու Ֆ. Օսվուալտի քարտէսին ; Ծրագրեց՝ Ա. Պիպէռճեան ; Վիմատպ.՝ Օ. Մոգոսեան; Գծագր.՝ Մ. Ուղուրիկեան. – [Կ. Պոլիս : Ա. Իհսան տպ.], 1923. – 1 թերթ, գուն. ; 56X81սմ:

93. Նոր Հայաստան եւ դրացի երկիրներ / Պատրաստեց՝ Կ. Յ. Բասմաջեան ; Վիմագրող՝ Ա. Ճէնտէրէճի (Ճէնտէրէճեան). – 1 : 1 000 000. – Բարիզ : [Fournier Frères], 1927. – 1 թերթ, գուն. ; 37X49 սմ:

94. Վանի ապրիլեան հերոսամարտը: Վան – քաղաքամէջի հայ ինքնապաշտպանութեան յատակագիծը պատրաստուած նոյն շրջանի զինուորական մարմնոյ կողմէ 7/20 ապրիլ 1915. «Վասպուրական». – Վենետիկ : Մխիթարեան տպ., 1930. – 1 թերթ, սև-սպիտակ ; 60X73 սմ:

95. Հայաստան: Համայնագիտական Հայաստան: Աշխարհագրական տեղեկություններ Հայաստանի վրայ: 1. Հին Հայաստան; 2. Նոր Հայաստան / Համախմբեց և գծ.՝ Յովհ. Գ. Պապէսեան. – Paris : Imp. Dufrenoy, 1931. – 1 թերթ, տեքստ, նկ. ; 75X85 սմ:

96. Անդրկովկասը XIX-րդ դարեսկզբին / Կազմող՝ Հովի. Հակոբյան. – 1 : 200 000. – [Ե.: Պետհրատ, 1938]. – 1 թերթ, գուն. ; 39X55 սմ:

97. Հին Հայաստան / Ըստ Կ.Յ. Բասմաջեանի. – Ա.տ. : Ա.հ., [1938]. -1 թերթ ; 62X102 սմ:

98. Հայաստան և դրացի երկրներ [ըստ Լինչի և Օսվալդի] / Կազմ.՝ Արտաշես Աբեղյան. – 1 : 1 000 000. – Stuttgart : Offsetherstellung Haufler & Wiest G.m.b.H. Stuttgart, [1940]. – 1 թերթ, ծալվ., գուն. ; 81X115 սմ

99. Երզնկայի կամ Եկեղեաց գաւառ / Հրատ.՝ Գ. Սիւրմէնեան. – 1 : 100 000. – [Գահիրէ: Սահակ-Մեսրոպ, 1947]. – 1 թերթ, սև-սպիտակ ; 44X57 սմ:

100. Հայկական լեռնաշխարհ: [Ֆիզիկական քարտեզ] / Հեղ.՝ Թ.Խ. Հակոբյան ; Քարտեզագիր՝ Հ. Ն. Գործակալյան. – 1 : 1 500 000. – [Ե.] : Ա.հ., [1950-1980 ական թթ.]. – 1 թերթ, 48X32 սմ:

101. Կիլիկիայի Հայկական Պետությունը (1080-1375 թթ.) / Հեղ.՝ Մ.Հ. Ճնահիրճյան ; Խմբ.՝ Ս.Տ. Երեմյան. – Ա.տ. : Ա.հ., [XX դարի II կես]. – 1 թերթ ; 20X30 սմ:

102. Պատմական Հայաստանը և հարևան երկրները: Սխեմատիկ քարտեզ / Հեղ.՝ Ա.Մ. Ոսկանյան ; Խմբ.՝ Ս.Տ. Երեմյան ; Ձևավորումը՝ Հ.Ն. Գործակալյան. – Ա.տ. : Ա.հ., [XX դարի II կես]. – 1 թերթ ; 30X42 սմ:

103. Քարտեզ-սխեմա Միքայել Նալբանդյանի 1860-1862թթ. ուղևորության / Կազմ՝. Խ. Սամվելյան ; Գծ՝. Հ. Մնացականյան. – 1 : 30 000 000. – Ա.տ. : Ա.հ., [XX դարի II կես]. – 1 թերթ ; 1 լրացուցիչ քարտեզ; 26X25 սմ:
Լրացուցիչ քարտեզ՝ Նալբանդյանի անցած ճանապարհը Թիֆլիսից – Էջմիածին – 1 : 1 800 000

104. Հայաստան: Երկիր դրախտավայր. – [Ֆրեզնո : Ա.հ., 1960]. – 1 թերթ, գուն. ; 74X 86 սմ:

105. Մեծ Հայք (Ըստ V-XV դդ. աղբյուրների): [Ֆիզիկական քարտեզ] / Քարտեզագիր՝ Հ. Ն. Գործակալյան. – 1 : 1 500 000. – Ե. : Միտք, 1966. – 1 թերթ ; 32X48 սմ:

106. Հայկական կոտորածները 1894-96 և 1915-16 թթ. ; Վան քաղաքի հերոսական ինքնապաշտպանությունը (7.04.1915-6.05.1915) ; Հայ ժողովրդի տեղաբաշխումը, 1914 թ. ; Տարոնի և Սասունի ինքնապաշտպանությունը / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան. – [Ե. : Ա.հ., 1967]. – 1 թերթ, ծալվ. ; 52X32 սմ:

107. Հայաստանը և հարևան երկրները XIX դարի վերջին և XX դարի սկզբին / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան. – [Ե. : ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975]. – 1 թերթ ; 27X43 սմ:

108. Հայաստան (II դ. մ.թ.ա. – V դ. մ.թ. սահմաններով): Ուսումնական քարտեզ / Հեղ.՝ Թ.Խ. Հակոբյան. – Ե. : Պետ. համալս. հրատ., 1970. – 1 թերթ, գուն. ; 45X77 սմ:

109. Ուրարտու պետությունը 870-590 թթ. մ.թ.ա. / Հեղ.՝ Ս.Տ. Երեմյան ; Ձևավորումը՝ Հ.Ն. Գործակալյանի. – 1 : 1 500 000. – [Ե. : ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971]. – 1 թերթ ; 35Х46սմ:

110. Հայաստանը մ.թ.ա. 66 - մ.թ. 224 թվականներին / Հեղ.՝ Ս.Տ. Երեմյան, ձևավորումը՝ Բ.Կ. Պատրիկյանի. – [Ե. : ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971]. – 1 թերթ ; 34Х48 սմ:

111. Ազատագրական շարժումները Հայաստանում XVIII դ. առաջին կեսին / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան. – Ք. 1. – 1 : 2. 000 000, Ք. 2. – 1 : 600 000. – [Ե. : ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972]. – 1 թերթ, (2) քարտեզ, գուն. ; 30Х42 սմ:

112. Հայկական լեռնաշխարհ և հարևան շրջաններ: Ուսումնական ֆիզիկական քարտեզ / Հեղ.՝ Ա.Մ. Ոսկանյան ; Քարտեզագիր՝ Մ.Հ. Քյուչուքյան ; Խմբ.՝ Ս.Տ. Երեմյան. – Ե. : Երևանի համալս. հրատ., 1976. – 1 թերթ ; 58Х82 սմ:

113. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Ուսումնական քարտեզ / Խ. Աբովյանի անվ. Աշխ. Կարմիր դրոշի շքանշանակիր Հայկակ. Մանկ. ինս-տ ; ՀՍՍՀ ԳԱ առընթեր աշխարհագրական ընկերություն. – Ե. : Լույս, 1978. – 1 քարտեզ, (2) թերթ, գուն. ; 24Х66 սմ:

114. 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի կովկասյան ռազմաճակատը / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան ; Ձևավոր.՝ Պ.Կ. Պողոսյան. – 1 : 1 400 000. – Ե. : Ա.հ., 1980. – 1 թերթ, գուն. ; 82Х61 սմ:

115. Հայաստանը և հարևան երկրները 1878-1914 թթ. / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան ; Ձևավոր.՝ Պ.Կ. Պողոսյան. – 1 : 1 200 000. – Ե. : Ա.հ., 1980. – 1 թերթ, գուն. ; 64Х82 սմ:

116. Հայաստանը և հարևան երկրները 1878-1914 թթ. / [Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան] –
1 : 2 000 000. – [Ե. : ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981]. – 1 թերթ, գուն. ; 42Х68 սմ:

117. Հեղափոխական շարժումները Արևելյան Հայաստանում (1905-1907 թթ.) / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան ; Ձևավոր.՝ Պ.Կ. Պողոսյան. – 1 : 1 250 000. – [Ե. : ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981]. – 1 թերթ, գուն. ; 37 x 62 սմ:

118. Հայաստանը և հարևան երկրները 591-653 թթ. / Հեղ.՝ Ս.Տ. Երեմյան ; Ձևավոր.՝ Պ.Կ. Պողոսյան. – 1 : 3 000 000. – Ե. : Գուն տպագր. տպ., [1984]. – 1 թերթ, գուն. ; 36Х54սմ:

119. Մեծ Հայքի թագավորությունը IV դ. (298-385 թթ.) / Հեղ.՝ Ս.Տ. Երեմյան ; Ձևավոր.՝ Պ.Կ. Պողոսյան. – 1 : 2 500 000. – Ե. : Գուն տպագր. տպ., [1984]. – 1 թերթ, գուն. ; 36Х53 սմ:

120. 1.Հայաստան; 2. Հայաստանի Հանրապետութիւն; 3. Հայաստանի գետերը եւ լճերը; 4. Հայաստանի լեռներ; 5. Արցախ (Լեռնային Ղարաբաղ); 6. Մեծ հայքի 15 նահանգներ; 7. Կիլիկիոյ հայկական թագաւորութիւնը; 8. Հայաստան Ուրարտական պետութեան ժամանակ Ք. Ա. Թ-Է դարեր: [Քարտեզներ] / Պատրաստեց՝ Գարին Համբարեան, Յակոբ Լատոյեան ; Կեդրոնատեղի Hamaskain, Shaghzoyan Cultural Center Bourj Hammoud-Lebanon.

– [Բեյրութ] : Տպ. Համազգայինի Վահէ Սէթեան, [1989 - 1994]. – 1 թերթ, ծալված, 8 էջ, 8 քարտեզ, գուն. ; 34X25 սմ:

121. Կարսի մարզը և Սուրմալուի գավառը 1914 թ.: Ազգաբաշխական քարտեզ / Հեղ.՝ Ս. Կարապետյան ; Հայկական Ճարտարապետությունն Ուսումնասիրող Կազմակերպություն. – 1 : 600 000. – Ե. : ՀՃՈւ, 1990. – 1 թերթ, գուն. ; 59X40 սմ:

122. Հայաստանը Տիգրան Բ Մեծի օրոք (մ.թ.ա. 95-56 թթ.): Մաս Ա. / Հեղ.՝ Մ. Հ. Զարդարյան; Գրախոս՝ Ա. Հակոբյան ; Գծագր.՝ Բ.Կ. Պատրիկյան ; Թարգմ.՝ Մ. Զարդարյան, Ս. Կրկյաշարյան ; Խմբ.՝ Է. Սարոյան ; Նկ.՝ Հ. Սամուելյան, ԽՍՀՄ ԳԱ, «Արեալ» միավորում, Մշակութային և տնտեսական նախաձեռնությունների կենտրոն, «Շեմ», «Նոյ» հրատ. (Հայաստանի պատմությունը քարտեզներում)
Մաս Ա. Տիգրան Բ-ի նվաճումները Մերձավոր Արևելքում մ.թ.ա. 94-70 թթ. : Քարտեզի դարձերեսին տեքստ՝ Տիգրան Բ Մեծի ժամանակագրությունը և նրա գահակալման մասին հին պատմիչների տեղեկությունների ընտրանի. – 1 : 2 850 000. – Ե. : ՀՀ պետական հրատարակչության տպարան, 1991. – 1 թերթ, գուն.; 89X67 սմ:

123. 1918 թ. հայ-թուրքական պատերազմը / Հեղ.՝ Ռ. Թադևոսյան. – Ե. : Սփյուռք, 1992. – 1 թերթ, 1 թերթ տեքստ ; 40X56 սմ:

124. Սարդարապատի և Բաշ-Ապարանի հերոսամարտերը: Ղարաքիլիսայի հերոսամարտը / Հեղ.՝ Ռ. Թադևոսյան. – Ե. : Սփյուռք, 1992. – 1 թերթ, 1 թերթ տեքստ ; 40X56 սմ:

125. Հայաստանը առաքելական քարոզչութեան ժամանակաշրջանում / Հեղ.՝ Է.Լ. Դանիելյան; Նվիրվում է Հայաստանում քրիստոնէութեան պետական կրոն հռչակելու 1700-ամեակին. – [Ե.] : «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 1994. – 1 թերթ, գուն. ; 47X68 սմ:

126. Աստուծոյ դրախտ, Նոյի տապան, Սեղան աստուծոյ, Յաւիտենական ուխտի երկիր Արարատայ լերինք՝ Հայք: Նվիրվում է Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակին / Հեղ.՝ Է.Լ. Դանիէլեան ; Քարտէզագիր՝ Հ.Ն. Գործակալեան. – (ԱՄՆ - Հայաստան): Հայք Հաստատութիւն, 1996. – 1 թերթ, գուն. ; 50X58 սմ:

127. Հայաստանը Ս. Գրիգոր Լուսավորչի առաքելության ժամանակաշրջանում: Նվիրվում է Հայաստանում Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700- ամյակին / Հեղ.՝ Է.Լ. Դանիելյան ; Քարտեզագիր՝ Հ.Ն. Գործակալյան. – Ա.տ. : Հայք, 1997. – 1 թերթ, գուն.; 45X62 սմ:

128. 1918 թ. մայիսի Սարդարապատի հերոսամարտը. – 1 : 12 000. – [Ե. : ՀՀ ՊՆ հրատ., 1998]. – 1 թերթ, գուն. ; 42X57 սմ.

129. Հայկական լեռնաշխարհ / Հեղ.՝ Ա. Ավդալյան ; Գիտ. խորհրդատու՝ Լ. Վալեսյան. – 1 : 1 000 000. – Ե. : ՀԱԸ, 2000. – 1 թերթ, գուն. ; 69X100 սմ:

130. Հայկական լեռնաշխարհ: [Ռելիեֆային]. – 1 : 2 000 000. – Ե. : Գեոքարտ կենտրոն, [2000]. – 1 թերթ ; 35X45 սմ:

131. Հայաստանն ըստ «Աշխարհացոյց» -ի և այլ աղբյուրների / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան ; Քարտեզագիր՝ Վ.Գ. Մխիթարյան. – Ե. : ԵՊՀ Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության աշխատանոց, 2001. – 1 թերթ, գուն. ; 69X99 սմ:

132. Սարդարապատի և Բաշ-Ապարանի հերոսամարտերը. 1918թ. մայիսի 22-29: [Ռազմական քարտեզ] / Հեղ.՝ Ռ. Թադևոսյան. – 1 : 200.000. – Ե. : Տիգրան Մեծ, 2002. – 1 թերթ, գուն. ; 66X47 սմ:

133. Արևմտյան Հայաստան – 1914: [Պատմաաշխարհագրական քարտեզ] / Հեղ.՝ Ռ. Թադևոսյան. – Ե. : Հակոբ Մեղապարտ, 2003. – 1 թերթ, (8) քարտեզ, գուն. ; 90X67 սմ:

Քարտեզ 1. Արևմտյան Հայաստան. – 1914. – 1 : 1.200 000.
Քարտեզ 2. Վասպուրական - Մուշ - Սասուն. – 1 : 800 000.
Քարտեզ 3. Հայկական Կիլիկիա (Ադանայի վիլայեթ). – 1 : 1 600 000.
Քարտեզ 4. Կարին. – 1 : 400 000.
Քարտեզ 5. Ակն - Արաբկիր - Չմշկածագ. – 1 : 400 000.
Քարտեզ 6. Խարբերդ. – 1 : 500 000.
Քարտեզ 7. Երզնկա. – 1 : 600 000.
Քարտեզ 8. Սուետիա (Մուսա լեռ). – 1 : 1. 500 000

134. Հայկական լեռնաշխարհ. Քարտեզ 1-3 / Հեղ.՝ Ս. Սարդարյան. – Ե. : Երևանի համալս. հրատ., 2004. – 3 թերթ ; 29X40 սմ:

135. Ք.1 Հայկական լեռնաշխարհի վանակատի (օբսիդիանի) հումքի աղբյուրները և նրանց տարածումը Առաջավոր Ասիայի հին բնակավայրերում (Ք.ծ.ա. X - II հազարամյակի սկիզբ):

136. Ք.2 Խուրրիական Արմենուդ (Առաջավոր Ասիական) ցեղերի Շենգավիթյան մշակույթի հուշարձանների տարածումը Հայկական լեռնաշխարհում (Ք.ծ.ա. V- II հազարամյակի սկիզբ):

137. Ք.3 Սուբարի-Միտանի Հնդեվրոպական ցեղերի Հալաֆյան մշակույթի հուշարձանների տարածումը հայկական լեռնաշխարհում (Ք.ծ.ա. VI հազարամյակի կեսից II հազարամյակի սկիզբը):

138. Հայկական լեռնաշխարհ: Ֆիզիկական քարտեզ / Գլխ. խմբ.՝ Ա. Նազարյան. – 1 : 100 000.- Ե. : Գեոքարտ կենտրոն, 2004 . – 1 թերթ, գուն. ; 98X68 սմ:

139. Իրան - իրանահայ համայնք / Հեղ.-կազմ.՝ Ռ. Թադևոսյան. – Ե. : Տիգրան Մեծ, 2005. – 1 թերթ, գուն., 1 թերթ աղյուսակ ; 65X94 սմ + տեղեկատու (64 էջ) ; 33X24 սմ., շպկ. մեջ:

140. Խնուսի գավառ (1914 թ. դրությամբ) / Հեղ.՝ Գ. Բադալյան. – 1 : 200 000. – Ե. : «Խնուս» մշակութ. հիմնադրամ, 2005. – 1 թերթ, գուն. ; 50X70 սմ:

141. Սահմանը Թուրքիայի և Հայաստանի միջև, ինչպես որոշվեց Ամերիկայի Միացյալ Նահանգների Նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից 1920 թ. /Քարտեզագիր՝ Վ.Գ. Մխիթարյան . – 1 : 1 000 000. – Ե. : Ա.հ., 2005 . – 1 թերթ, գուն. ; 82X85 սմ:

142. Տիգրան Մեծի տերությունը / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան ; Քարտեզագիր՝ Վ.Գ. Մխիթարյան . – 1 : 4 500 000. – Ե. : Վիամիր, 2006. – 1 թերթ, գուն. ; 70X100 սմ:

143. Հայաստանը 387-428 թթ: Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան. – 1 : 1 500 000 . – Ե. : Վիամիր, 2006. – 1 թերթ, գուն. ; 78X98 սմ:

144. Հայաստանն ըստ Սևրի պայմանագրի (10.VIII.1920 թ.) և ԱՄՆ - ի Նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի / Հեղ.՝ Բ. Հարությունյան. – 1 : 1 000 000 . – [Ե]. Գեոքարտ կենտրոն, 2006. – 1 թերթ, գուն. ; 48X74 սմ. – (Նվիրվում է ԱՄՆ - ի Նախագահ Վուդրո Վիլսոնի ծննդյան 150- ամյակին:

145. Արևմտյան Հայաստան - 1914: Վարչական քարտեզ / Հեղ.՝ Ռ. Թադևոսյան. – 2-րդ հրատ.- Ե. : Տիգրան Մեծ, 2007. – 4 թերթ, գուն., կազմի մեջ ; 68X96 սմ. + 1 բուկլետ (այբբենական անվանացանկ, 40 էջ):
Քարտեզ 1 . – Արևմտյան Հայաստան - 1914. – 1 : 1 400 000
Քարտեզ 2. – Կարինի նահանգ (վիլայեթ), Արևմտյան Պոնտոս և Կարսի մարզ. – 1 : 1 100 000 ; Երզնկայի գավառակ. – 1 : 1.500 000 ; Կարինի գավառակ. – 1 : 1 500 000 ; Կարսի մարզի Կարսի օկրուգ. – 1 : 1 500 000 ; Կարինի (Էրզրումի) նահանգի Բայազետ գավառ և Երևանի նահանգի Սուրմալու գավառ. – 1 : 1 700 000 ; Վանի և Բաղեշի նահանգներ. – 1 : 700 000 ; Մոկսի և Շատախի գավառակներ. – 1 : 400 000 ; Վան-Տոսպի և Հայոց Ձորի գավառակներ. – 1 : 500 000:
Քարտեզ 3. – Սեբաստիայի նահանգ, Տրապիզոնի նահանգի Տրապիզոնի գավառ, Ջանիկ գավառ, Անկարայի նահանգի Կեսարիայի գավառի և Հալեպի նահանգի Մարաշի գավառ. – 1 : 900 000 ; Նիկոմեդիայի գավառ. – 1 : 100 000 ; Հայկական Կիլիկիա. – 1 : 1 600 000 ; Եվդոկիայի գավառակ. – 1 : 300 000 ; Պեյլանի, Սուետիայի և Քեսապի գավառ. – 1 : 800 000 ; Դիարբեքիրի, Խարբերդի նահանգներ և Ուրֆայի գավառ. – 1 : 800 000 ; Ակնի, Արաբկիրի և Չմշկածագի գավառ. – 1 : 400 000:
Քարտեզ 4. – Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. – 1 : 600 000 ; Արցախյան ազատամարտ:

146. Հայաստանի Բագրատունյաց տերությունը (890-908 թթ.) / Հեղ.՝ Բ. Հարությունյան. – 1 : 1 400 000. – Ե. : Մակմիլան Արմենիա, 2007. – 1 թերթ, գուն. ; 90X115 սմ:

147. Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունը IV դարում (298-387թթ.) / Հեղ.՝ Բ. Հարությունյան. – 1 : 1 400 000. – Ե. : Մակմիլան Արմենիա, 2007. – 1 թերթ, գուն. ; 90X115 սմ:

148. Հայաստանն ըստ «Աշխարհացոյց» - ի / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան. – 1 : 1 400 000. – Ե. : Մակմիլան Արմենիա, 2007. – 1 թերթ, գուն. ; 90X115 սմ:

149. Վարդանանց պատերազմը (450-451 թթ.) / Հեղ.՝ Բ.Հ. Հարությունյան. – 1 : 1 200 000. – Ե. : Մակմիլան Արմենիա, 2007. – 1 թերթ, գուն. ; 90X115 սմ:

